Սուբյեկտիվ իրավունքը հանդիսանում է սոցիալական իրականության արտացոլումն իրավունքի սուբյեկտի իրավագիտակցության մեջ, որը թույլ է տալիս բացահայտել օբյեկտիվ իրավունքի նորմի վրա հիմնված հնարավոր վարքագծի չափը, նպատակ ունենալով բավարարել օրինական շահը, որն արտահայտում է բուն իրավասու անձի կողմից որոշակի գործողությունների կատարման հնարավորությունը, իրավասու անձի կողմից պարտավոր անձից որոշակի վարքագիծ պահանջելու հնարավորությունը, ինչպես նաև անհրաժեշտ դեպքերում պետության հարկադիր ուժին դիմելու հնարավորությունը:

Տվյալ սահմանումը ենթադրում է հետևյալ իմաստային հիմնավորում.

- «արտացոլում» կատեգորիայի միջոցով սուբյեկտիվ իրավունքի սահմանման ժամանակ շեշտը դրվում է սուբյեկտի մոտ՝ իր սուբյեկտիվ իրավունքի մասին պատկերացումների ձևավորման գործում իրավագիտակցության ակտիվ դերի վրա: Սոցիալական իրականությունը, բեկվելով սուբյեկտի իրավագիտակցությունով, ակտիվորեն ներգործում է «սուբյեկտիվ իրավունք» հասկացության իմաստային լրացման վրա,
- «սուբյեկտիվ իրավունք» արտահայտությունն իրենից ներկայացնում է օբյեկտիվ իրավունքի նորմի վրա հիմնված՝ հնարավոր վարքագծի չափհետևաբար չպետք է մեկնաբանվի իբրև փաստարկ հոգուտ սուբյեկտիվ իրավունքի ածանցյալության, երկրորդականության՝ օբյեկտիվի նկատմամբ,
- անհրաժեշտ է նաև ի նկատի ունենալ այն փաստը, որ սուբյեկտիվ իրավունքի ժամանակակից տեսության մեջ օգտագործվող «շահ» հասկացությունը կատարում է գործիքային դեր և այլևս հանդես չի գալիս իբրև սուբյեկտիվ իրավունքի էական լրացում,
- ժամանակակից իրավագիտության կողմից առանձնացվող՝ սուբյեկտիվ
- իրավունքի հատկանիշները (սուբյեկտին պատկանելությունն ու սուբյեկտից կախվածությունը) նույնպես չեն կարող բառացիորեն մեկնաբանվել: Այդ հատկանիշները նպատակահարմար չէ դիտարկել իբրև միմյանց համարժեք, քանի որ դրանցից մեկը (պատկանելությունը) բխում է մյուսից (կախվածություն), ավելի ճիշտ՝ մեկն ուղեկցում է մյուսին: Սուբյեկտիվ իրավունքի բնութագիրը՝ իբրև սուբյեկտից կախված, իրավաչափ է միայն սուբյեկտի կողմից իրեն օբյեկտիվ նորմով առաջարկվող վարքագծի տարբերակներից ընտրության հնարավորության իմաստով,
- անհրաժեշտ է կշռադատված մոտեցում սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի փոխգործության հիմնախնդրի, սուբյեկտիվ

իրավունքի և իրավաբանական պարտականության, որի ժամանակ յուրաքանչյուր կատեգորիան կստանար ճանաչում որպես ինքնարժեք:

Գիտական առումով հեռանկարային է սուբյեկտիվ իրավունքի սահմանումն իբրև «անձնական իրավական հզորության ոլորտի» կամ «սուբյեկտի իրավական հզորության ոլորտի»: Այն թույլ է տալիս նշել ինքնության պահը, սուբյեկտով իրավունքի լրացման փաստը: Սուբյեկտիվ իրավունքը, որը գիտակցված է իբրև «անձնական իրավական հզորության ոլորտ», իրավական մշակույթի համատեքստում առաջին հերթին ենթադրում է ոչ թե սուբյեկտի կողմից իր իրավական հնարավորությունների ակտիվ որոնում և ոչ թե սուբյեկտի կողմից այդ սահմանների ընդլայնման ձգտում, այլ, ընդհակառակը՝ սուբյեկտի ինքնապարտադ-

րում, իրեն հասած իրավունքի բեռի գիտակցում:

Իրավունքի մասին սուբյեկտի պատկերացումներին ներկայումս տրվում է երկրորդական դեր՝ սուբյեկտիվ տարրերը, որոնք իրենց արտահայտությունն են գտնում իրավագիտակցության և սուբյեկտիվ իրավունքի մեջ, կամ դուրս են մղվում իրավունքի ծայրամաս, կամ ընդհանրապես դուրս են բերվում վերջինիս սահմաններից: Տվյալ դիրքորոշումը չի կարող բավարար ճանաչվել: Իրավագիտակցությունը նպատակահարմար չէ դիտարկել իբրև արտահրավական երևույթ⁵: Այն չափով, որով արտացոլում է օբյեկտիվ նորմը, այն հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքի փոխանցիչ (ծագման գործոն): Իրավագիտակցությունը պետք է ստեղծագործորեն ակտիվ դեր խաղա սուբյեկտիվ իրավունքի ընկալման գործում:



⁵ Տե՛ս Лившиц Р.З. Теория права. М., 2001.

АРСЕН КАХКЦЯН

Начальник юридического отделения ОО АОУ
генерального штаба Вооруженных Сил РА, подполковник

ТЕОРИЯ ВОЕННОГО ПРАВА В СИСТЕМЕ ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Современные взгляды на потребности и возможности, способы обеспечения государственных интересов и национальной безопасности обуславливают повышение требований к качеству подготовки сил безопасности, Вооруженных Сил Республики Армении (далее – ВС РА), специальных служб.

Реформирование системы образования нашего государства по западным образцам, необходимость чего изначально вызывала сомнения, так как российская образовательная система и ее прежние успехи были признаны во всем мире, затрагивает многие направления деятельности, включая систему военного образования и военной науки.

Переход на предусмотренную Болонским соглашением 1999 года двухуровневую систему подготовки военных кадров, иные реформации в области образования оказываются разрушительными для высшей военной школы и науки, ведомственного образования силовых структур. Следует признать тот факт, что ориентация образования на западные стандарты становится губительной для армянского образования, в том числе специализированного и ведомственного.

В этой связи следует выделить следующие доводы, касающиеся как характеристики сложившейся системы образования в области юриспруденции, так и направления дальнейшего ее совершенствования.

Во-первых, что инициаторы начавшихся реформ системы образования в области юриспруденции не сумели учесть ни особенностей подготовки специалистов в области юриспруденции, ни специфики их правоприменительной деятельности, ни тенденций развития военно-правовой науки и ее значения в правовом регу-

лировании общественных отношений в сфере обороны и безопасности Республики Армении (далее – РА), правового обеспечения национальной безопасности в условиях роста новых угроз стране. Компетентностный подход, в настоящее время ставший основой образовательной парадигмы образовательных организаций не только военных вузов, не может быть применен в профессиональной социализации сил обеспечения национальной безопасности.

Во-вторых, технократические установки в образовательной сфере, делающие упор на формирование исключительно прагматичных профессиональных навыков, приводят к формированию у курсантов и слушателей психологии наемников, что актуализирует проблему надежности национальной безопасности Республики Армении. При реализации идеи реформирования системы подготовки кадров в военных образовательных организациях по западным стандартам не учитываются традиции коллективизма в сфере военной службы, современные угрозы национальной безопасности Республики Армении.

В условиях декларировавшегося прежним руководством Министерства обороны РА курса на формирование нового облика ВС РА актуализировались проблемы коммерциализации сознания военнослужащих, коррупции, законности и правопорядка в военных организациях. Однако очевидной проблемой в современных условиях является нарастающее противоречие между возрастающими потребностями общества в объективном научном осмыслении современных причин коррупции и преступности, реальных возможностей противодействия им на основе вносимых научно обоснованных предложений ученых-криминологов и их ограниченным ис-

пользованием в законотворческой и правоприменительной практике.

В-третьих, требуют повышения уровня защищенности национальные интересы страны в связи с наличием как внешних, так и внутренних угроз безопасности: развертывание (наращивание) воинских контингентов иностранных государств (групп государств) на территориях стран, сопредельных с Республикой Армения и ее союзниками, наличие (возникновение) очагов межнациональной и межконфессиональной напряженности; деятельность международных вооруженных радикальных группировок, иностранных частных военных компаний в районах, прилегающих к государственной границе Республики Армения и границам ее союзников, а также наличие территориальных противоречий, рост сепаратизма и экстремизма.

В-четвертых, вызывают тревогу сокращение подготовки кадров по юридическим специальностям в военных образовательных организациях, преподавательского состава, изменение их статуса. Компетентность, обоснованность и правомочность ряда решений в сфере реорганизации системы военного образования, ранее принятых высшим военным руководством страны, вызывает обоснованное сомнение значительной части военнослужащих.

Кроме того, актуализируется проблема свертывания специализированной подготовки военных юристов, сокращения военно-юридической службы, что снижает возможности правового обеспечения законности и правопорядка в Вооруженных Силах Армении, других войсках, воинских формированиях и органах, правовой защиты прав военнослужащих, осуществления военного строительства, развития науки военного права.

Названные недостатки реформирования системы образования в области юриспруденции привели к тому, что состояние законности и правопорядка в ВС РА, по материалам Военной прокуратуры РА, свидетельствует о значительном

росте преступлений, совершенных военнослужащими, падении авторитета, морального облика и противоправном поведении ряда высокопоставленных должностных лиц¹. Все это не может не отражаться на отношении к профессиональному военному образованию и военной службе значительной части курсантов, слушателей, преподавателей и командиров. Поэтому ранее предлагавшиеся рядом специалистов подходы к совершенствованию и развитию системы военного строительства и профессионального военного образования, по нашему мнению, заслуживали компетентного обсуждения.

Одним из направлений деятельности по преодолению указанных выше недостатков обеспечения национальной безопасности, в частности в сфере юридического образования, на наш взгляд, должно стать включение в действующие в РА государственные образовательные стандарты высшего образования по направлению подготовки (специальности) «Юриспруденция» учебных дисциплин «Военное право» и «Военные проблемы международного права».

Вторым направлением подобной деятельности должна стать сфера подготовки научно-педагогических кадров (далее – НПК), в которой целесообразно уточнить направленность системы профессионального образования в адъюнктуре, структуру диссертационных советов и специальности, по которым будут приниматься диссертации к защите. Необходимо сохранить соискательство как форму подготовки НПК в ведомственных вузах, на базе которых не созданы диссертационные советы, формировать преимущественно объединенные советы военных вузов (вузов). Такой подход в сочетании с качественным научным руководством позволит рассчитывать на устранение искусственной, но объективно существующей разобщенности субъектов научной деятельности (научно-исследовательских организаций и вузов), форм научной работы (научных исследований и технического творчества), а также на сокращение дистанции

¹ В 2020 году в воинских частях ВС РА и в частях других войск было зарегистрировано 3016 преступлений, что на 2087 или в 3 раза больше по сравнению с аналогичным периодом 2019 года (929 случаев). Об этом на совещании во главе с генеральным прокурором Армении Артуром Давтяном заявил военный прокурор РА Ваге Арутюнян, подводя итоги деятельности возглавляемой им структуры. // Официальный сайт Генеральной прокуратуры Республики Армения. Режим доступа: <https://www.prosecutor.am/en> (дата обращения: 20.03.2022).

между такими по существу неразделимыми формами творческой деятельности, как научная работа, подготовка офицерских кадров и воспроизводство военных ученых. Это в свою очередь обеспечит быстрое реагирование на изменения актуальности проблематики проводимых исследований и более полное использование научного потенциала силовых ведомств, адаптацию военного профессионального образования и военной науки к общегосударственной системе, а также последующую более глубокую интеграцию в масштабах всей военной организации государства.

В качестве обоснования подобного изменения образовательных стандартов приведем следующие аргументы.

Во-первых, военное право, применяемое органами военного управления, их юридическими службами, органами военной юстиции, традиционно рассматривается в трех аспектах: как комплексная отрасль права, регулирующая определенную группу общественных отношений; как наука (сфера знаний в области правоведения); как специальная учебная дисциплина, связанная с преподаванием военного права. Названные разновидности понятия военного права взаимосвязаны, взаимозависимы и взаимообусловлены, но каждое из них имеет собственное содержание.

Во-вторых, в РА действует значительное количество норм в военно-оборонной сфере, которые объективно невозможно отнести к той или иной традиционной отрасли права. Военное право на современном этапе рассматривается как комплексная отрасль права, в которую наряду с иерархически выстроенными по вертикали (исходя из критерия юридической силы правовых актов) нормами военного законодательства, регулирующими вопросы военной деятельности государства и военно-служебные отношения, входят нормы, относящиеся к другим (классическим, т. е. традиционным) отраслям законодательства – государственному, административному, финансовому, жилищному, земельному, уголовному и другим в части, касающейся специфических особенностей правоотношений в сфере военной службы, статуса военнослужащих и воинских правоотношений.

В-третьих, государственная политика в сфере оптимизации системы военного образования должна представлять собой регулируемую деятельность государства, осуществляемую им для достижения конкретных стратегических целей и решения задач национального или глобального уровня. Поэтому закрепление ее в соответствующих нормативных правовых актах является необходимым условием перехода от пожеланий и рекомендаций к требованиям, обязательным для исполнения, и также нуждается в соответствующем научном обосновании.

Рассмотрим эти положения подробнее в их тесной взаимосвязи.

Военное право как специализированная комплексная отрасль юридической науки исследует теорию и практику правового обеспечения военной деятельности государства и его институтов в сфере обороны и безопасности. Научные исследования, адекватные потребностям теории и практики, являются необходимой основой военно-юридического образования.

Военное профессиональное образование и наука должны органично взаимно дополнять и развивать друг друга и тем самым активно способствовать сохранению и дальнейшему прогрессу военных научных школ. Направленность военно-правовых исследований в системе военного образования не может и не должна ограничиваться только вопросами образования, а должна распространяться на весь спектр теоретической и прикладной проблематики в рамках специальностей и учебных дисциплин подготовки специалистов с выходом на удовлетворение конкретных потребностей военного строительства. Интеграция должна предполагать, в том числе и объединение под единым началом всех практикуемых в образовательных и исследовательских организациях форм научной работы.

Сегодня возникают проблемы определения направлений подготовки военных кадров по юриспруденции и организации деятельности диссертационных советов по соответствующей специальности. Следует заметить, что данная специальность была выделена в разделение на группы осуществлено в физико-математических, технических, сельскохозяйственных, филологических и военных науках. В этом классификаторе

в разделе «Военные науки» должна быть выделена специальность «Военное право, военные проблемы международного права». Таким образом, изначально данная специальность не входила в такую отрасль науки, как юриспруденция.

Исходя из вышеизложенного, можно отметить, что содержанию специальности присуща двойственная природа (одновременно юридическая и военная). Научная специальность «Военное право, военные проблемы международного права» соответствует области (разделу) военной науки, занимающейся исследованием теоретических и практических вопросов правового регулирования общественных отношений в сфере обороны, военного строительства, проблем содержания и системы военного права и военных аспектов других отраслей Армянского права, структуры, функций и деятельности органов военного управления, военно-юридических органов, состояния, причин и обоснования основных направлений профилактики преступлений и иных правонарушений, совершаемых военнослужащими; использования автоматизированных систем информационного обеспечения военных организаций, военно-юридических органов, а также проблем военного законодательства зарубежных государств и военных аспектов международного права. Нет сомнений, что в соответствии с ней выстраиваются направления научных исследований, на нее ориентируется исследовательская работа кафедр и научных отделов как основных структурных подразделений научных и образовательных учреждений.

Значительную роль номенклатура специальностей играет в создании и организации работы диссертационных советов. Очевидно, что номенклатура специальностей должна соответствовать потребностям времени, учитывать реалии, развитие и состояние юридических и смежных с ними наук.

Вместе с тем номенклатура специальностей требует новаторских изменений и дополнений по включению специальности, с названием которой необходимо определиться. Варианты наименования: военное право, военные проблемы международного права; правовое обеспечение государственной безопасности; правовое обес-

печение национальной безопасности; военное право; право безопасности; военные проблемы международного права и др.

Задача для представителей науки военного права – сделать ее оптимальной как с точки зрения развития и будущности юридической и военной науки, так и с позиций подготовки высококвалифицированных военных специалистов, эффективной работы диссертационных советов.

Для достижения указанной цели предполагается учитывать актуальность научной военно-юридической специальности, ее практическую востребованность; развитие единой правовой отрасли или отраслей, составляющих научную специальность, их регулятивных свойств; содержание данных знаний как научных и наукообразующих, что предполагает отражение в них наиболее существенных сторон военно-правовой действительности; знания должны иметь определенную систему и должны быть выражены в надлежащей форме (диссертации, монографии, научные издания).

Сужение сферы научной деятельности названных учебно-научных учреждений актуализирует потребность сохранения научных школ исследования правовых проблем обеспечения обороны и безопасности страны. Многолетняя история существования «Военное право, военные проблемы международного права» научной специальности свидетельствует о ее востребованности как для юридической, так и для военной науки, для практики правового обеспечения военного строительства, безопасности государства, для целей нормотворческой и учебно-методической деятельности. Вместе с тем за последние годы наметилась объективная тенденция к расширению предмета исследований в области военного права, что обусловлено изменяющимися социально-экономическими и политико-правовыми реалиями, реформированием военной организации государства и возрастанием в ней роли права, новыми угрозами и вызовами безопасности личности, общества и государства, которую отмечают многие представители военно-правовой науки.

Рассматривая научные аспекты исследуемой проблематики, следует отметить, что на протяжении ряда лет на страницах журналов велась

научная дискуссия о том, какой должна быть рассматриваемая специальность. Так, А.А. Толкаченко писал, что «...государственные органы, включая органы обеспечения различных видов безопасности, рассматривают не узкий круг военно-правовых вопросов, а широкий круг комплексных, смежных проблем правового обеспечения безопасности страны» [1]. Между тем актуальные и все расширяющиеся правовые проблемы безопасности недостаточно представлены в действующих научных специальностях по юридическому направлению, представляется актуальным решение вопроса расширения научной специальности «Военное право, военные проблемы международного права» за счет включения в нее социально значимых проблем, объединенных общим понятием «Право безопасности».

Такое предложение лишь нормативно закрепило бы фактически существующее, более широкое, нежели указано в названии специальности, положение дел в научной специальности «Военное право, военные проблемы международного права» и открыло бы новые актуальные направления научных исследований в области военного права в соответствии с современными угрозами и вызовами безопасности, с которыми приходится сталкиваться не только воинским формированиям, но и всей военной организации государства».

В.Е. Чеканов считает, что название специальности должно соответствовать названию отрасли права: «...осмысление имеющегося опыта позволяет сделать вывод о фактическом наличии в отечественной правовой системе комплексной отрасли, например российского права – “Право национальной безопасности Российской Федерации” [2, с. 2-4]. Ее подотраслями и правовыми институтами могли бы стать соответственно: “Право военной безопасности”; “Право пограничной безопасности”; “Право экономической безопасности”; “Право финансовой безопасности”; “Правовая безопасность” и другие, основу которых составляют действующие в данной области нормативные правовые акты и имеющиеся научно-учебные наработки».

Таким образом, эти фрагменты научной дискуссии не позволяют сформулировать од-

нозначное название научной специальности. Как обоснованно утверждается в научной литературе, суть номенклатуры научных специальностей состоит не в том, чтобы максимально и детальным образом перечислить те или иные науки и их подотрасли, а скорее в том, чтобы выделить определенные блоки, направления научной мысли, которые служат ориентиром, во-первых, для самих диссертантов, а во-вторых, для формирования соответствующих диссертационных советов.

Военно-правовая наука не может замыкаться только на узко специфической военной проблематике. Она должна включать исследование правовых аспектов всего круга оборонных вопросов, которыми ни одна другая отрасль правовых знаний не занимается. Методологические и общетеоретические проблемы военного права неоднократно рассматривались на научных мероприятиях, где определились два концептуальных подхода к их решению: разработка военно-правовых проблем в рамках сложившейся системы отечественных отраслей права либо на основе признания концепции военного права как разновидности юридической науки.

В современной отечественной практике реализованы оба подхода, т. е. диссертации по военно-правовой проблематике как ранее, так и ныне разрабатываются и защищаются и в рамках известных отраслевых юридических наук, и по комплексной научной специальности «Военное право, военные проблемы международного права». Вместе с тем включение указанного направления в структуру научных специальностей, по которым осуществляется подготовка и защита диссертаций, является объективным показателем самостоятельности военного права как полноценной отрасли науки.

Наука военного права должна быть основой отрасли и специальности. Потребности практики актуализируют повышение внимания исследователей к новым направлениям военно-правовых исследований. Такими перспективными направлениями становятся, в частности, военно-полицейское, криминологическое и криминалистическое направления в исследовании проблем военного права, а также военно-уголовной политики.

Дальнейшее развитие научных школ в сфере военного права будет определяться преимущественно образованием по военно-юридическому направлению. Продолжение и интенсификация работы по детализации модели современной военно-научной школы в ведомственном вузе представляет собой одну из актуальных задач в области организации научной деятельности.

Следствием рассмотренных выше преобразований в сфере юридического образования может стать повышение эффективности отечественной военно-правовой науки и качества военного профессионального образования при более рациональном использовании выделяемых для их обеспечения бюджетных средств.

Высказанные суждения не претендуют на бесспорность и предлагаются для заинтересованной компетентной дискуссии о роли и месте

специализированной комплексной отрасли военного права в системе Армянского права в интересах укрепления правового обеспечения обороны и безопасности страны.

ПРИСТАТЕЙНЫЙ БИБЛИОГРАФИЧЕСКИЙ СПИСОК:

1. Толкаченко А.А. Современное состояние военно-юридической (военно-правовой) науки и ее роль в укреплении безопасности России // Право и безопасность. 2007. № 3-4, (24-25).
2. Чеканов В.Е. Некоторые проблемы развития военно-юридической науки и образования на современном этапе и возможные пути их решения // Право в Вооруженных Силах. 2009. № 2. С. 2-4.



ԱՅՈՒՋԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Վենետրի ԻՄՄՕ» ՍՊ ընկերության իրավաբան

**«ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ՓՈԽԱԴՐՈՂԻ ԵՎ ԱՌԱՔՈՂԻ (ԷՔՍՊԵՐԻՏՈՐԻ)
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մաքսային իրավահարաբերությունը, լինելով հանրային հարաբերություն, բնորոշվում է որպես այնպիսի հասարակական հարաբերություն, որը կազմում է մաքսային գործի համապատասխան տարր, ընդգրկվում նրա կառուցվածքի մեջ և կարգավորվում է մաքսաիրավական նորմերով: Ցանկացած իրավահարաբերության, այդ թվում մաքսայինին, ներհատուկ են երեք հիմնական կառուցվածքային տարրեր. ա) մաքսային իրավունքի սուբյեկտներ (մաքսային իրավահարաբերության մասնակիցներ), բ) մաքսային իրավահարաբերության օբյեկտներ, գ) այդ իրավահարաբերության բովանդակություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 128-րդ հոդվածը սահմանում է՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու ընդհանուր պարտականությունը: Օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այդ պարտականությունը կրող սուբյեկտ է հանդիսանում հայտարարատուն: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ **ապրանքներ տեղափոխող անձը** կամ նրա կողմից լիազորված անձը¹:

Իրավահարաբերության սուբյեկտներին անդրադառնալիս հարկ է նկատել այն փաստը, որ որպես հայտարարատու «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգով ապրանքների ներկրման դեպքում հանդիսանում է փոխադրողը: ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-

րդ հոդվածի համաձայն. «Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգն այնպիսի մաքսային ընթացակարգ է, որի դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնակցման, փոխհատուցման տուրքերի վճարման: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքով, ինչպես նաև Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով օտարերկրյա և Միության ապրանքների փոխադրման համար: Այս մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը²: «Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի 5-րդ հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության ապրանքները պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը օտարերկրյա պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքից դեպի Միության մաքսային տարածք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխման դեպքում³:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածը անդրադարձել է այն հանգամանքին, որ

¹ Տես ՀՀ մաքսային օրենսգրքի ՀՕ-83, ընդունված 06.07.2000, ուժի մեջ է 01.01.2001: Սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2000.08.21/19(117):
² Տես ԵԱՏՄ մաքսային օրենսգրք, ընդունված 11.04.2017, ուժի մեջ է մտել 01.01.2018, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2018.03.12/17(1375).1:
³ Տես Պայմանագիր ՀՀ-ի՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ», ընդունված 10.10.2014, ուժի մեջ է մտել 02.01.2015, սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2015.01.21/3(1092) Հոդ.54:

«մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում կարող են հանդես գալ փոխադրողը, այդ թվում նաև՝ մաքսային փոխադրողը, առաքողը, եթե նա Մաքսային միության անդամ պետության անձ է: Միաժամանակ հստակեցրել, որ Օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, պարտավոր է. ապահովել ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը, ապահովել ապրանքների, մաքսային կապարակնիքների և կնիքների, կամ նույնականացման այլ միջոցների պահպանվածությունը: Թույլ չտալ ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության:

Միաժամանակ, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի համաձայն. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգն այնպիսի մաքսային ընթացակարգ է, որի դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնակցման, փոխհատուցման տուրքերի վճարման: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքով, ինչպես նաև Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով օտարերկրյա և Միության ապրանքների փոխադրման համար: «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

Ինչպես նաև հարկ է նշել, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված են այն պարտավորությունները, որոնք փոխադրողն ունի «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով տեղափոխվող ապրանքների նկատմամբ: Մասնավորապես, Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, պարտավոր է. ապահովել ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը, ապահովել ապրանքների, մաքսային կապարակնիքների և կնիքների, կամ նույնականացման այլ միջոցների պահպանվածությունը: Թույլ չտալ ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության:

Միաժամանակ, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 148-րդ հոդվածի 3-րդ կետի իրագործման նպատակներով, և դրանով սահմանվում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների բեռնաթափման, փոխաբեռնման (վերաբեռնման) և ապրանքների հետ կատարվող այլ բեռնային գործողությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինման համար մաքսային մարմնի թույլտվությունը (այսուհետ համապատասխանաբար՝ բեռնային գործողություններ, տրանսպորտային միջոցների փոխարինում, թույլտվություն) ստանալու կամ բեռնային գործողությունների իրականացման և (կամ) տրանսպորտային միջոց-

ների փոխարինման մասին մաքսային մարմնին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման հաջորդականությունը⁴:

Անդրադառնալով Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 413 որոշմանը, հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից փաստացի արտահանված ապրանքների քանակի հաստատումն իրականացվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի մեկնման վայրում՝ տարածաշրջանի մաքսային մարմնի համապատասխան նշանները դնելով,.....որի գործունեության վայր համարվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի մեկնման վայրը⁵:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված բոլոր ապրանքները և դրանց առնչվող փաստաթղթերը ապրանքների առաքման վայր չհասցնելու դեպքում փոխադրողը անկախ հայտարարատու լինելու հանգամանքից կամ հայտարարատուն **պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան**, որի մաքսային մարմինը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, իրականացրել է ապրանքների բացթողումը, իսկ փոխադրման ժամանակ պարտականությունները չկատարելու այլ դեպքերում, պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում հայտնաբերվել է խախտումը: (ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 154-րդ հոդված)

Նշված հարցի կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսական հանձնա-

ժողովի կոլեգիայի 13.12.2017թ. թիվ 170 որոշմամբ, կարգավորվում են «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության դադարման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն որի ընթացակարգի հսկողությունը իրականացնում է ուղարկող մաքսային մարմինը:

Հաշվի առնելով նշված որոշումը հատկանշական է, որ «**մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առաքման վայր չհասցնելու դեպքում հնարավոր մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթը պետք է հարուցվի ուղարկող մաքսային մարմնում**, իսկ ինչ վերաբերում է իրավախախտման սուբյեկտի ընտրությանը, որևէ կերպ պրակտիկայում հնարավոր չէ ապահովել միատեսակ մոտեցում:

Մասնավորապես, ներկայումս «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծվող բեռների հայտարարագրումը կատարվում է փոխադրողի, մաքսային փոխադրողի, առաքողի կողմից, մինչդեռ, մեր կարծիքով, փոխադրողին վարչական պատասխանատվության ենթարկել փոխադրվող բեռի անվանման, նկարագրության, գնի, քանակի, ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններով հայտագրման համար, ոչ իրավաչափ է, նկատի ունենալով, որ վերջինս բազմիցս իրազեկված չի լինում ապրանքի տեխնիկական բնութագրի մասին և ապրանքների հայտարարագրումն իրականացնում է մատակարար ընկերության տրամադրած բեռնաառաքող փաստաթղթերի հիման վրա և որ իրավախախտման սուբյեկտ հանդիսացող վարորդը փաթեթվածքում առկա ապրանքի եղելությունը չի կարող պարզել հայտարարագրի լրացման ժամանակ անկախ նախնա-

⁴ Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 170 որոշումը, պաշտոնական կայքէջ՝ <https://www.altar.ru/tamdoc/17kr0170/>:

ԵՏՀ կոլեգիայի 13.12.2017թ. թիվ 170 որոշմամբ սահմանվում է՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների բեռնաթափման, փոխաբեռնման (վերաբեռնման) և ապրանքների հետ կատարվող այլ բեռնային գործողությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինման համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու կամ այդ գործառնությունների իրականացման մասին մաքսային մարմնին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը:

⁵ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 413 որոշում «Մաքսային տարանցման մաքսային ընթացակարգով Եվրասիական տնտեսական միության ապրանքների տեղաբաշխման պայմանների մասին», պաշտոնական կայքէջ <https://www.altar.ru/tamdoc/10sr0413/>

կան զննման իրավունքից օգտվելու հանգամանքից:

Հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ հաճախ գործնական կիրառության ընթացքում ունենում ենք խնդիրներ՝ պայմանավորված փոխադրողի կողմից լրացված տարանցիկ հայտարարագրում առկա ապրանքների և վերջինիս կողմից փաստաթղթերով ներկայացված և իրական, փաստացի բեռի մասին տեղեկությունների վերաբերյալ վերջինիս չիմացության հարցում⁶: Հաճախակի խնդիրներ են առաջանում վարչական վարույթի իրականացման արդյունքում, քանի որ վարչական վարույթի ընթացքում փոխադրողը/վարորդը բանավոր պարզաբանումների և/կամ բացատրությունների արդյունքում փաստարկում է, որ մատակարար ընկերության պահեստում բեռնաբարձման գործընթացին ներկա չի գտնվել, ապրանքների բարձումը կատարվել է առանց իր մասնակցության, որի հետևանքով չի տեսել թե ինչ ապրանքներ են ավտոմեքենայում տեղադրել, ինչպես նաև ՀՀ տեղափոխված ապրանքների հայտարարագրումը կատարվել է փոխադրողին տրամադրված փաստաթղթերի հիման վրա:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է մատնանշել, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ փաստացի տեղափոխված ապրանքների իրական տվյալների և բեռնուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկությունների անհամապատասխանությունը իրականում առաջանում է ոչ փոխադրողի մեղքով: Օրինակ՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն 2019 թվականի ապրիլի 5-ի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 61 որոշմամբ պարզվել է, որ 06.03.2019 թվականին ՀՀ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչության աշխատակիցները «Երևանի Ուրարտու ա/մ մսի կոմբինատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մաքսային հսկողության տարածքում զննության են ենթարկել «Հույս-մոտոր» ՍՊ ընկերության անվամբ Բագրատաշենի մաքսային կետ-բաժնով

10106070/280219/0000004 տարանցման հայտարարագրով Ռուսաստանի Դաշնությունից ՀՀ ներմուծված, ապրանքներն ու հայտնաբերել, որ բացի հայտարարագրված ապրանքներից առկա է նաև չհայտարարագրված 414կգ բրուտտո, 360 կգ նետոտո քաշերով մետաղական ցուցապահարան⁷:

Փաստի առթիվ 06.03.2019թ.-ին «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի նկատմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության հատկանիշներով կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն և իրականացվել է վարչական վարույթ:

2019 թվականի մարտի 25-ին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթին ներկայացել է Արմենակ Գուրգենի Սարգսյանը և բացատրություն է տվել այն մասին, որ հանդիանում է «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ: Ընկերությանը պատկանող «35CR368/02L547» պետհամարանիշի ավտոմեքենայով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: «ՅՈՒՄ» ընկերության (հասցե՝ ՌԴ, Մոսկվա ք., Սպարտակի փող., 19 շենք) կողմից ՀՀ-ում գործող «Հույս մոտոր» ՍՊ ընկերության անվամբ մատակարարվող ավտոյուղերը հասցեատիրոջը առաքելու նպատակով: ՌԴ Օբնինսկ քաղաքում գտնվող պահեստային տարածքում իր կողմից վարվող ավտոմեքենան բեռնվել է ապրանքներով և իրեն են տրամադրվել բեռն ուղեկցող փաստաթղթերը: Բեռնաբարձման ժամանակ ներկա չի գտնվել, քանի որ ըստ ընկերության սահմանած թույլատրելիության նորմերի, մուտք գործելն այդ տարածք արգելվում է, ուստի կանգնել է ցանկապատից հեռու, իսկ մատակարար ընկերության կողմից կատարվել է ապրանքների բարձումը: Միաժամանակ հայտնել է, որ ՌԴ մաքսային տեսուչի կողմից ապրանքները կապարակնքվել են բարձման տեղում, իսկ փաստաթղթերը տրվել են իրեն: Իր իմացությամբ բեռնատար մեքենայում եղել են միայն ավտո-

⁶ St'u Макконнелл, К.Р. Экономикс: Принципы, проблемы, и политика. В 2 т. [Текст] / К.Р. Макконнелл, С.Л. Брю: Пер с англ. 11-го изд. Т.1.- М.: Республика, 1992.- 339 с

⁷ Տե՛ս ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության 2019 թվականի ապրիլի 5-ի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» թիվ 61 որոշում: (լրացուցիչ տեղեկատվություն՝ սույն որոշումը տրամադրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության կողմից)

յուղեր, որի արդյունքում Բագրատաշենի մաքսային կետում լրացրել է 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագիրը, որից հետո Բագրատաշենի մաքսային կետում բեռը մաքսային զննման է ենթարկվել ռենտգեն սարքավորման միջոցով: Մաքսային զննման արդյունքում հայտնաբերվել է, որ ավտոմեքենայի մեջ առկա է նաև 414 կգ բրուտոտ, 360 կգ նետոտ քաշով մետաղական ցուցապահարան: Ապրանքների զննումից հետո մեքենայի վրա դրվել է «E0140120» համարի մաքսային ապահովման միջոցը:

Հայտնել է նաև, որ մատակարար ընկերությունը բեռնել է նաև այդ ապրանքը, բացի այդ ցուցապահարանը բեռն ուղեկցող փաստաթղթերում՝ մասնավորապես 27.02.2019թ. թիվ 2702/0189 հաշիվ-ապրանքագրում, ներառված չի եղել, որի մասին ինքն իմացել է միայն «Ուրարտու տերմինալ» մաքսային պահեստում և հավելել, որ իր մեղավորությունը բացակայում է մաքսային կանոնների խախտման մեջ:

2019 թվականի ապրիլի 3-ին մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթին ներկայացել է «Հույս մոտոր» ՍՊ ընկերության լիազոր ներկայացուցիչ Էդուարդ Արամի Ասլամազյանը, որը ներկայացրել է նոտարական կարգով վավերացված 27.03.2019թ. թիվ 12-19 լիազորագիրը: Էդուարդ Արամի Ասլամազյանը բացատրություն է տվել այն մասին, որ ընկերությունը զբաղվում է ավտոյուղերի և ավտոպահեստամասերի ներմուծմամբ: 2019 թվականի մարտի 6-ին ընկերության կողմից ներմուծված ապրանքների մեջ եղել է նաև մետաղական ցուցապահարան՝ 414 կգ բրուտոտ, 360 կգ նետոտ քաշով: ՌԴ-ում գործող մատակարար «ՅԿՕՄ» ընկերության կողմից ներկայացված նամակ-պարզաբանմամբ նշվել է, որ «ROLF» մականիշի ապրանքները իրենց ընկերության կողմից սխալմամբ է ընդգրկվել հայտարարագրված ապրանքներում: Չհայտարարագրված ապրանքները հանդիսանում են գո-

վազդային ցուցափեղկեր կամ ցուցանակներ: Միաժամանակ հայտնել է, որ վարորդի մեղավորությունը ապրանքների չհայտարարագրման մեջ բացակայում է:

Հիմք ընդունելով վարչական վարույթի ընթացքում ներկայացված պարզաբանումները և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածը⁸, ՀՀ մաքսային օրենսգրքի 206-րդ և 221-րդ հոդվածները՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում: Ուստի, վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի նկատմամբ սկսված սույն գործի վարույթը կարճվել է՝ իրավախախտման կազմի բացակայության պատճառաբանությամբ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ վարչական գործի նյութերով պարզվել է, որ «ՅԿՕՄ» ընկերության 27.02.2019թ. թիվ 2702/0189 հաշիվ-ապրանքագրով⁹ «Հույս մոտոր» ՍՊ ընկերության անվամբ ուղարկված ապրանքի վերաբերյալ Բագրատաշենի մաքսային կետ-բաժնում 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագիրը¹⁰, սակայն բեռում եղած 414 կգ, 360 կգ մետաղական ցուցապահարանը չի հայտարարագրվել, ինչը տեղի է ունեցել ոչ թե «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի կողմից, այլ մատակարար «ՅԿՕՄ» ընկերության համապատասխան աշխատակցի մեղքով, այսինքն՝ Արմենակ Գուրգենի Սարգսյանի արարքում բացակայում է մաքսային կանոնների խախտման կազմը, ինչը հիմնավորվում է 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագրով, «ՅԿՕՄ» ընկերության կողմից ներկայացված 29.03.2019թ. թիվ T-009 նամակ-պարզաբանմամբ, «Կաս Տրանս» ՍՊ ընկերության վարորդ Արմենակ Գուրգենի Սարգսյանի և «Հույս մոտոր» ՍՊ ընկերության լիա-

⁸ Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքը, ընդունված 06.12.1985, ուժի մեջ է մտել 01.06.1986, սկզբնաղբյուր՝ ՀՍՍՀԳՍ 1985/23, պաշտոնական կայքէջ՝ file:///C:/Users/P_C/Downloads/73129.pdf

⁹ Տե՛ս 27.02.2019թ. թիվ 2702/0189՝ «ՅԿՕՄ» ընկերության հաշիվ-ապրանքագիր, պաշտոնական կայքէջ՝ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ,

<https://trade.gov.am/cas/login?service=https%3A%2F%2Ftrade.gov.am%2Ftrade%2Flogin%2Fcas>:

¹⁰ Տե՛ս 28.02.2019թ. թիվ 10106070/280219/0000004 տարանցման հայտարարագիրը, պաշտոնական կայքէջ՝ <https://trade.gov.am/trade/home/index>:

գոր ներկայացուցիչ Էդուարդ Արամի Ասլամազյանի բացատրություններով:

Վերոշարադրյալի համակարգային վերլուծության և խնդրի առկայությունը վերհանելու վերաբերյալ վերևում արտահայտած դիրքորոշումը ամփոփելու համար անդրադառնանք ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությանը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշման դեպքում, որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է **տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով**:

Սույն աշխատանքում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ներմուծման դեպքում, որպես իրավախախտման սուբյեկտ՝ հայտարարատու պատասխանատվության է ենթարկվում **փոխադրողը, մաքսային փոխադրողը կամ առաքողը**՝ տարանցման հայտարարագրի սխալ լրացման համար, մինչդեռ պրակտի-

կան ցույց է տալիս, որ անհրաժեշտ է օրենսդրական հիմք գործնականում առկա խնդիրը լուծելու համար: Նշվածը ցույց է տալիս նաև, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում հարց կարող է առաջանալ՝ արդյո՞ք իրավաչափ չի լինի, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների չհայտարարագրման կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրման կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկությունների նշման դեպքում իրավաբանական անձին՝ այսինքն, այն կազմակերպությանը որի անվամբ ներմուծվում է որոշակի խմբաքանակով ապրանքներ ենթարկվի վարչական պատասխանատվության:

Ի վերջո հարկ է նշել, որ անդրադառնալով իրավաչափության հարցին, պետք է փաստել, որ յուրաքանչյուր կազմակերպություն նման կերպով հարկային պարտավորություններից խուսափելու միտում կարող է ունենալ և այդ պարագայում որքանով է իրավացի, որ փոխադրողին 50000 ՀՀ դրամի տուգանք նախատեսելով, թույլատրել ընտրություններին հսկայական խմբաքանակով ապրանքների ներմուծում կազմակերպել Հայաստանի Հանրապետություն: Հետևաբար՝ քանի դեռ չկա օրենսդրական լուծում, պրակտիկայում այս կարգավորումը կարող է բերել բացասական տարբեր հետևանքների:



ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդական,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԼԱՏԵՆՏՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է թրաֆիքինգի լատենտայնության կանխարգելման հարցերին: Հոդվածը հիմնված է թրաֆիքինգի լատենտայնության պատճառների և հետևանքների բացահայտմանն ուղղված հեղինակի կողմից նախկինում իրականացված հետազոտության վրա: Այդ հետազոտության արդյունքում բացահայտվեցին թրաֆիքինգի լատենտայնությունը պայմանավորող գործոնները, ինչպես նաև լատենտայնության հետևանքները, և բնականաբար, անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել թրաֆիքինգի լատենտայնության կանխարգելմանն ուղղված միջոցներ:

Հեղինակի կողմից առաջարկվում են թրաֆիքինգի լատենտայնության կանխարգելման միջոցների երեք խումբ՝ ընդհանուր միջոցներ, բնական լատենտայնության կանխարգելման միջոցներ և արհեստական լատենտայնության կանխարգելման միջոցներ:

Հոդվածում առաջարկվող միջոցառումների իրագործման պարագայում, անշուշտ, հնարավոր կլինի ապահովել թրաֆիքինգի լատենտայնության կանխարգելումը:

Բանալի բառեր. թրաֆիքինգ, լատենտայնություն, կանխարգելում, բնական լատենտայնության կանխարգելում, արհեստական լատենտայնության կանխարգելում:

ГЕВОРГ ИСРАЕЛЯН

Советник ректора Академии юстиции,
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент

ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЛАТЕНТНОСТИ ТРАФФИКИНГА

Статья посвящена вопросам предупреждения латентности траффикинга. Данная статья основана на предыдущем исследовании причин и последствий латентности траффикинга, в результате которого автором были выявлены факторы, определяющие латентность траффикинга, а также последствия латентности, исходя из чего определяется необходимость предложения мер по предупреждению латентности траффикинга.

Автор предлагает три группы мер предупреждения латентности траффикинга: общие меры, меры предупреждения естественной латентности и меры предупреждения искусственной латентности траффикинга.

В случае реализации мер, предложенных в статье, представится возможным обеспечение предупреждения латентности траффикинга.

Ключевые слова: траффикинг, латентность, предупреждение естественной латентности траффикинга, предупреждение искусственной латентности траффикинга.

GEVORG ISRAYELIAN

Advisor to the Rector of Academy of Justice,
Lecturer of Eurasia International University,
Candidate of Legal Sciences, Associate Professor

PREVENTION OF THE TRAFFICKING LATENCY ISSUES

This article is dedicated to the issues preventing trafficking latency. The article is based on author's previous research on the determinantes and consequences of latency to trafficking. As a result of the research, the factors determining the latency of trafficking, as well as the consequences of latency are arised, and, of course, the need to propose measures to prevent the latency of trafficking.

The author offers three groups of latency prevention measures: general measures, natural latency prevention measures and artificial latency prevention measures.

If the measures proposed in the article are implemented, it will certainly be possible to ensure that the latency of trafficking is prevented.

Keywords: trafficking, latency, prevention of natural latency, prevention of artificial latency.

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՍԱՆԿՑԻԱ (ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Հեղինակը քննարկում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում (ուժի մեջ է մտնում 01.07.2022թ.) ամրագրված դատավարական սանկցիաներից մեկը՝ դատավարական սուբյեկտիվ իրավունքների սահմանափակման միջոցը:

Հեղինակը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր.դատ. օր.) 143-րդ հոդվածը, ֆորմալ-դոգմատիկ մեթոդաբանության հիման վրա, ենթարկում է գիտագործնական վերլուծության: Հոդվածում մեկնաբանվում են միջնորդություն հարուցելու, բացարկ հայտնելու և մյուս դատավարական իրավունքները չարաշահելու պարբերականությունը, այդ իրավունքները սահմանափակելու քանակական և ժամանակային պայմանները:

Բանալի բառեր. դատավարական սուբյեկտիվ իրավունք, իրավունքի սահմանափակում, համաչափություն, իրավունքի չարաշահում, միջնորդության հարուցել, բացարկ հայտնել:

АРТУР ГАМБАРЯН

Заведующий кафедрой теории права и конституционного права
Российско-Армянского (Славянского) Университета, доктор юридических наук,
профессор, заслуженный юрист Республики Армения

ОГРАНИЧЕНИЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА КАК УГОЛОВНАЯ САНКЦИЯ (НАУЧНЫЕ КОММЕНТАРИИ)

Автор обсуждает одну из новых процессуальных санкций, закрепленных в новом Уголовно-процессуальном кодексе РА (вступает в силу с 01.07.2022) - меру ограничения процессуальных субъективных прав.

Автор подвергает статью 143 Уголовно-процессуального кодекса РА (далее-УПК РА) на основе формально-догматической методологии научно-практическому анализу. В статье комментируется периодичность злоупотребления правом на подачу ходатайства, на отвод и другими процессуальными правами, количественные и временные условия ограничения этих прав.

Ключевые слова: процессуальное субъективное право, ограничение права, соразмерность, злоупотребление правом, возбуждение ходатайства, отвод.

ARTUR GHAMBARYAN

Head of the Department of Theory of Law and constitutional law
Russian-Armenian University, Doctor of Law, Professor,
Honored Lawyer of the Republic of Armenia

RESTRICTION OF THE EXERCISE OF THE RIGHT AS: CRIMINAL SANCTION (SCIENTIFIC-PRACTICAL COMMENTS)

